



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
ԹԻՎ 1 ՀԵՐԹԱՎԱՆ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ

14.02.2023թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 26 անդամները, բացակայում է Գարիկ Ղամաբարյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝
Համայնքի ղեկավարի տեղակալներ Ս.Վարդանյանը, Գ.Գրիգորյանը, համայնքի ղեկավարի գլխ. խորհրդական Վ. Չիլինգարյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը, Ա.Ջաբարյանը, Գ.Աֆյանը, Ա. Ծերունյանը, Ս.Բալաբեկյանը և գյուղերի վարչական ղեկավարները:

Նիստը վարում է Չարենցավան համայնքի ղեկավար Հ. Շահգալոյանը:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Ձեզ եմ ներկայացնում Չարենցավան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի թիվ 1 հերթական նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի 2022 թվականի բյուջեի 4-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին:
2. Չարենցավան համայնքի սեփականության 2022 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 79-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
4. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
5. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի արտադարձական ուսումնական հաստատությունների կանոնադրությունները հաստատելու մասին:
6. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Ա. Խաչատրյանի անվան մանկական երաժշտական դպրոց» , «Գառզուի անվան արվեստի դպրոց» և «Արա Մանուկյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների դահլիճների ժամանակավոր օգտագործման համար գանձվող վարձակալական վճարի սահմանման մասին: